



Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը (ծովի մակերևույթից 1 600 - 2 300 մ բարձրության վրա): ՀՀ Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Արցախ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 14.2%,
- գյուղատնտեսություն՝ 14.9%,
- շինարարություն՝ 5.6%,
- մանրածախ առևտուր՝ 4.1%,
- ծառայություններ՝ 1.7%:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքի արտադրություն),
- բ) ծխախոտային արտադրատեսակների (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),
- գ) հիմնային մետաղների արտադրություն
- դ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

**Արտաշատ քաղաքը** (2020թ. տարեակգրին՝ 19.3 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և խմիչի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքի), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (կոմիների, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

**Արարատ քաղաքը** (2020թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

**Վեդի քաղաքը** (2020թ. տարեսկզբին՝ 11.8 հազ. մարդ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:


**Մասիս քաղաքը** (2020թ. տարեսկզբին՝ 20.6 հազ. մարդ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթի և թղթային արտադրատեսակների արտադրությունը և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,  
2020թ. հունվարի 1-ի դրությամբ**

%

տղամարդ -123 527      տարիք      կին -133 043



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Մանրածախ առևտրի օբյեկտներ, րնդամենը	1 446	1 557	1 623	1 821	1 890
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	1 272	1 381	1 449	1 638	1 703
կրպակներ	78	76	75	74	78
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	4	4	4	4	4
առևտրի այլ օբյեկտներ	91	95	94	104	104

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախադպրոցական	77	78	80	78	81
Պետական հանրակրթական	112	112	112	112	112
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	22	21	21	22	23
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	1	1	1	3	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	4	4	4	4	4

## ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup>
Արտաշատ	19 230
Մասիս	20 653
Արարատ	20 445
Վեդի	11 800

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

<sup>2</sup> ՀՀ քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

## ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>
<b>Արտաշատի տարածաշրջան</b>		
1	Աբովյան	1 412
2	Ազատավան	2 929
3	Այգեգարդ	3 046
4	Այգեպատ	1 469
5	Այգեստան	2 434
6	Արաքսավան	853
7	Արևշատ	2 265
8	Բերդիկ	851
9	Բերքանուշ	1 888
10	Բաղրամյան	1 795
11	Բարձրաշեն	1 548
12	Բյուրավան	1 233
13	Բուրաստան	1 979
14	Գետազատ	2 001
15	Դալար	2 474
16	Դեղձուտ	932
17	Դիմիտրով	1 134
18	Դիտակ	678
19	Դվին	2 862
20	Ոստան	3 091
21	Զրաշեն	1 698
22	Կաքավաբերդ	-
23	Հովտաշեն	1 080
24	Հնաբերդ	579
25	Լանջազատ	1 345
26	Վերին Դվին	1 852
27	Վերին Արտաշատ	3 882
28	Վարդաշեն	545
29	Կանաչուտ	1 305
30	Մասիս	1 473
31	Քաղցրաշեն	2 942
32	Մխչյան	4 935
33	Մրգավետ	2 465
34	Մրգավան	1 754
35	Մրգանուշ	1 220
36	Շահումյան	4 172

<sup>1</sup> ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>
37	Նարեկ	1 202
38	Նորաշեն	3 561
39	Նշավան	1 445
<b>Արարատի տարածաշրջան</b>		
1	Ավշար	5 189
2	Արալեզ	2 493
3	Արարատ	8 170
4	Արմաշ	2 595
5	Այգավան	4 305
6	Գինեվետ	677
7	Գոռավան	2 613
8	Դաշտաքար	561
9	Երասխ	892
10	Եղեգնավան	1 465
11	Զանգակատուն	1 183
12	Շաղափ	925
13	Ոսկետափ	5 020
14	Պարույր Սևակ	512
15	Ուրցյանջ	154
16	Ուրցաձոր	3 182
17	Լանջառ	277
18	Լանջանիստ	140
19	Լուսառատ	2 679
20	Լուսաշող	639
21	Նոյակերտ	1 947
22	Նոր կյանք	2 670
23	Նոր ուղի	881
24	Սուրենավան	2 595
25	Սիսավան	2 203
26	Տափերական	4 015
27	Տիգրանաշեն	145
28	Վարդաշատ	185
29	Վանաշեն	2 550
30	Փոքր Վեդի	3 332
<b>Մասիսի տարածաշրջան</b>		
1	Ագատաշեն	743
2	Այնթափ	9 686
3	Արբաթ	1 800
4	Արգավանդ	1 907
5	Արևաբույր	1 294
6	Գեղանիստ	2 968
7	Գետափնյա	1 475
8	Դաշտավան	2 126
9	Դարակերտ	2 724
10	Դարբնիկ	1 216
11	Զորակ	1 997
12	Խաչվառ	2 066
13	Հայանիստ	2 415
14	Հովտաշատ	4 037
15	Ղուկասավան	2 003

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>
16	Մարմարաշեն	3 522
17	Նիզամի	1 223
18	Նորաբաց	2 455
19	Նորամարգ	2 065
20	Նոր Խարբերդ	7 407
21	Նոր Կյուրիև	1 109
22	Զրահովիտ	1 100
23	Ռանչպար	1 221
24	Սայաթ –Նովա	2 120
25	Սիս	1 495
26	Սիփանիկ	575



**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 183	4 817
Ծնվածներ, մարդ	127	60	67
Մահացածներ, մարդ	84	41	43
Ամուսնություններ	47	X	X
Ամուսնալուծություններ	10	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	34.1	X	X
<b>Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝</b>			
նախադպրոցական	270	131	139
հանրակրթական	1 419	675	744
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	147	100	47
նախնական մասնագիտական (արհեստագործական)	12	3	9
միջին մասնագիտական	46	24	22
բարձրագույն մասնագիտական	-	-	-
<b>Առողջապահության ոլորտ՝</b>			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	36 204	...	...
Մարզիկներ, մարդ	61	3	58
Զբաղվածներ, մարդ	5 307	2 185	3 122
նրանցից՝ գիտական հիմնարկներում	1	1	0.0
նրանցից՝ գիտության դոկտոր	0.1	0.1	-
գիտության թեկնածուներ	0.4	0.3	0.1
ուսուցիչներ	98	89	9
բժիշկներ	18	...	...
միջին բուժանձնակազմ	38	...	...
Գործազուրկներ, մարդ	793	391	402
<b>Մոցիայական ապահովության ոլորտ</b>			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 407	818	589
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	271	X	X
<b>Հաճախումների քանակը տարվա ընթացքում</b>			
գրադարան	11 417	...	...
թատրոն	549	...	...
համերգ	-	-	-
թանգարան	1 008	...	...
<b>Բրավական ոլորտ</b>			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	62	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	34	X	X
միջին ծանրության	19	X	X
ծանր	9	X	X
առանձնապես ծանր	1	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: